

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՆԵԿՐԱՍՕՎԻ)

1

Երանի՜ր անշար այն բանաստեղծին

*Երանի՜ր անշար այն բանաստեղծին,
Ում մաղձն է սակաւ, զգացումը — լի.
Ողջագուրճում են նորան սրբտագին
Բարեկամները խաղաղ արուեստի:*

*Ամբոխի միջում նորա տկանջին
Հասնում է անվերջ, շոյիչ համակրանք.
Օտա՜ր է նորան կասկածանք ներքին —
Ստեղծագործ ոգու այդ խորին տանջանք:*

*Անձնատուր անփոյթ և հանգիստ կեանքին,
Խստաշունչ, հեզնող նա երգն ատելով,
Խոր տիրանում է ամբոխի սրբտին.
Իր խաղաղասէր, շոյիչ քընարով՝*

*Յափշտակւո՛ւմ են նորա մեծ խեղբից,
Չունի նա նեղիչ, չունի բամբասող.*

Եւ նորան մարդիկ ժամանակակից
Մահից առաջ են պատրաստում կոթող . .

Բայց վայ այն երգչին, որ քաջ, անվեհեր
Հանդէս է հանում ազնիւ հանճարով
Ամբօխի ախտեր ու մոլորթիւններ—
Դէպի նա բախտն է անդուծ, անդորով:

Կըրծքում սրնուցած սերմն ատելութեան,
Զինուած հեգնանքով, ծաղրը— շըրթունքին,
Նա միշտ անցնում է տատասկոտ ճամբան
Իր պատուհասող քընարը ձեռքին:

Եւ մատնուած անդուսպ, չար պարսաւանքի,
Նա դըրուատներին աղանջ է գընում
Ո՛չ անոյշ խօսքում փառքի ու գովքի,
Այլ գոռ ու վայրագ աղաղակներում:

Վառ ցընորքներին իւր վըսեմ կոչման
Ե՛ւ հաւատալով, ե՛ւ կասկածելով,
Նա կեանքում սէր է քարոզում մարդկան
Քարոզում ժըխտիչ, հակաճառ լեզուով:

Եւ նորա խօսքի ամեն մի հընչիւն
Ծընում է անհաշտ թըշնամիք դաժան՝
Թէ դատարկամիտ, թէ խել, թէ գիտուն—
Ամենքն էլ պատրաստ խոչելու նորան:

Անէ՛ծք են թափում չորս կողմից վերան...
Բայց մարդիկ նորա մահը տեսնելով,
Ի՛նչեր նա արեց— յոյն ժամ կիմանան,
Եւ ի՛նչպէս սիրեց— նա միշտ ատելով...

Օ Ր Հ Ն Ե Ր Գ

Ատուանձ, տո՛ւր ազգիս բարիք ամենայն,
Օրհնիր ազգային և՛ դործ, և՛ վաստակ,
Ազգում ազատ կեանք, արգար դատաստան
Հաստատուն պահիր ամեն ժամանակ:

Որպէսզի ազատ աճեն, զարգանան
Նորածիլ գործքեր՝ ազգին շահաւոր,
Սփռիր ազգի մէջ Դու սէր գիտութեան,
Յոյց տուր ուսմունքի ուղին լուսաւոր:

Եւ մի թող տանջուիլ մաշիչ լուծի ոտի
Այն ընտրեալներիդ չար կապանքներում,
Որոնց ձեռք մի օր Դու լուսոյ դրօշակ
Սիրով պիտի տաս հայրենի երկրում...

Է Լ Ե Գ Ի Ա

(Հատուած)

Թող այս ներկայ խախուտ մեղան պընդէ միշտ,
Որ հին նիւթ է «Ժողովրդի ցան ու վիշտ»,
Որ արուեստը պէտք է նորան մոռանայ.—
Մի հաւատաք, չէ հընանում երբէք նա:
Երանի՛ չէ տալիներից նա մաշուէր,
Աստծոյ աշխարհն այն ժամ զուարթ կը ծաղկէր...
Բայց քանի դեռ ազգեր նեղուած և աստանդ
Կեանք են վարում՝ խորազանին հընազանդ,

Որպէս նիհար հօտեր խանձուած դաշտերում,—
 Նոցա սև օրն պէտք է ողբալ երգերում,
 Նոցա պէտք է սպասաւորէ միշտ մուգան,
 Եւ այդ դաշն է ամենից վեհ, սրբազան...
 Հասարակաց ցաւն ու կարիքն յիշեցնել
 Ամբոխ դասին, երբ խրախճանքին անձնուէր՝
 Նա անխոյթ է, նա խնդրում է ու երգում
 Շարժել խիղճը հրդօրների չոր կրքօքում,
 Նոցա ուշքը հանուր վրշտին դարձնելով,—
 Օ՛, դորանից էլ մեծարժան, մեծագով
 Ի՞նչ նըպատակ, ի՞նչ կոչում կայ, ընկերներ,
 Որին պօէտն իր քընարով ծառայէր...
 Ես հէգ ազգիս նուիրեցի իմ քընար.
 Գուցէ, մեռնեմ ազգիս անյայտ ու օտար.
 Բայց ես նորան ծառայեցի—և խաղաղ,
 Հանգիստ խըղճով կը ողջունեմ ցուրտ դադաղ:
 Կըռիւ, կըռիւ ազգի համար՝ եռանդուն.
 Թո՛ղ չը յաղթէ ամեն կըռուող թըշնամուն,
 Թո՛ղ նա ընկնի՛ր... Բայց ամեն մէկն, սիրելիք,
 Պէտք է անշուշտ նետուի կըռուի փոթորիկ...
 :

4

Ա Կ Ա Ն Ձ Դ Ր Ա Մ

Ականջ գըրած ահեղ մարտի տաղնապին,
 Ամեն անգամ, երբ նոր զոհ է նա տանում,
 Ես չեմ ցաւում, թէ զոհն ունի ընկեր, կին,
 Եւ ո՛չ իրան հերոսին եմ մեղքանում...
 Աւաղ, կինը կը սփոփուի իւր ցաւից,
 Եւ մոռացման կը տայ ընկերն ընկերին.
 Բայց կայ մի սիրտ—միշտ բաբախուն, սիրալից,
 Նա մինչև մահ չի մոռանայ խեղճ զոհին:

Կեղծ ու պատիր մեր առօրեայ գործերում,
 Ուր վերջ չը կայ ամեն տեսակ լրկտութեան,
 Տեսայ միակ անկեղծ արցունք աշխարհում—
 Խեղճ մայրերի այն արցունքն էր սըրբազան:
 Նոքա երբէք չեն մոռանալ ողջ կեանքում
 Իրանց որդոց՝ ընկած արեան փոթորկում,
 Ինչպէս երբէք չի պմբառնալ դէպի վեր
 Լացող ուռիւն գետին թեքած իր ոստեր...

Ա.Լ. ԾԱՏՈՒՐԵԱՆ